



ԱՐՅԱՆԻ
ՆԱԽԱԳԹԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԵԿՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱՐԱՍՐԱՆ



«ԱՐՅԱՆ»
ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 1(4), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.yసు.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(4), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

«ԱՐՑԱԽ» հրատ. – Publ. «ARTSAKH» – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

Լվիրվում է Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման հիմնադրման 5-ամյակին

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՍՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմիմա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂՎԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Ստտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆԻՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Համբուրգ, Գերմանիա)
Ռուզաննա ՀԱԿՈՒՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Նազիկ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎԱԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(4), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատ., 2020, 244 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 1-ին (4-րդ) համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Գերմանիան, Լեհաստանը և Ուկրաինան ներկայացնող մոտ երեք տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

Գիտական պարբերականում զետեղված են նաև Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման ու Երևանի պետական համալսարանի կողմից 2019թ. սեպտեմբերի 12-15-ը Ստեփանակերտում համատեղ կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովի լավագույն գիտական հոդվածները:

***Dedicated to the 5th Anniversary
of Union of Young Scientists and Specialists of Artsakh***

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)

Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 1(4), 2020, Yerevan, Publ. «ARTSAKH», 2020, 244 pages.

The first (4) issue of «Scientific Artsakh» journal 2020 comprises the scientific works of approximately 30 prominent and young scientists from Armenia, Artsakh, Germany, Poland and Ukraine on the topical issues of social sciences.

The publication also contains the best scientific articles of the 4th international youth scientific conference «The past, present and future of the Armenian statehood», jointly organized by the Union of Young Scientists and Specialists of Artsakh and Yerevan State University on September 12-15, 2019 in Stepanakert.

***Посвящается 5-летию основания
Объединения молодых учёных и специалистов Арцаха***

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ,
член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор

Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор

Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент

Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор

Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент

Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор

Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)

Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент

Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)

Джультетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор

Гевогг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор

Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент

Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)

Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор

Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор

Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор

Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)

Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)

Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор

Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор

Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент

Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор

Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор

Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 1(4), 2020, Ереван, Изд. «АРЦАХ», 2020, 244 страниц.

В первом (4) номере 2020 г. журнала «Научный Арцах» нашли место научные работы около 30 выдающихся и молодых ученых из Армении, Арцаха, Германии, Польши и Украины, исследующие актуальные вопросы общественных наук.

В издании размещены также лучшие научные статьи 4-ой международной молодежной научной конференции «Прошлое, настоящее и будущее амянской государственности», совместно организованной Объединением молодых учёных и специалистов Арцаха и Ереванским государственным университетом 12-15 сентября 2019 года в Степанакерте.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Անի Խաչատրյան. Հայրենիք-Սփյուռք մշակութային փոխանցություններն արվեստի բնագավառում 1980-ական թվականներին.....61

Ani Khachatryan. Diaspora-Homeland Cultural Relations in the Field of Art in the 1980s

Ани Хачатрян. Культурное взаимодействие родины и диаспоры в 1980-х гг. в области искусства

Գայանե Հովհաննիսյան. Ելիզավետպոլի նահանգը Անդրկովկասի վարչատարածքային բաժանումներում (1917 թ. փետրվար - 1918 թ. հունվար).....74

Gayane Hovhannisyan. Elizavetpol Governorate in the Transcaucasian Administrative Division (February 1917-January 1918)

Гаяне Оганнисян. Елизаветпольская губерния в Закавказском административном делении (февраль 1917 г. - январь 1918 г.)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Արման Ասրյան. Բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման ու արդիականացման աշխատանքների ֆինանսավորման մեխանիզմները ՀՀ-ում.....83

Arman Asryan. Mechanisms of Financing the Renovation and Modernization Works of Multi-Apartment Buildings in the RA

Арман Асрян. Финансирование ремонта и модернизации многоквартирных домов в РА

Ժաննա Բազիյան. Գիտելիքների տրանսֆերի ֆենոմենը տեխնոպարկում գիտության, կրթության և բիզնեսի ինտեգրացիայի զարգացման համատեքստում.....94

Zhanna Baziyan. The Phenomenon of Knowledge Transfer within the Context of Development of Science, Education and Business Integration in the Technopark

Жанна Базиян. Феномен трансфера знаний в контексте развития интеграции науки, образования и бизнеса в технопарке

Հովիկ Գրիգորյան. ՀՀ ազգային նորարարական համակարգի կատարելագործման հնարավորությունները որպես երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման աղբյուր.....104

Hovik Grigoryan. Opportunities for Improving the RA National Innovation System as a Source of Long-Term Economic Growth

Овик Григорян. Возможности совершенствования инновационной системы РА как источник обеспечения долгосрочного экономического роста

Հրանտ Հայրապետյան. Գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ռիսկայնության նվազեցման ֆինանսական խնդիրները ՀՀ-ում.....112

Hrant Hayrapetyan. Financial Problems of Reducing Risk of Agricultural Plants in Armenia

Грант Айрапетян. Финансовые проблемы снижения риска выращивания сельскохозяйственных растений в Армении

Աշոտ Մարկոսյան, Էլյանորա Մաթևոսյան. Հայաստանի Հանրապետության տնտեսության (ՀՆԱ-ի) կառուցվածքային փոփոխությունները և դրանց միտումները.....125

Ashot Markosyan, Elyanora Matevosyan. Structural Changes in the Economy (GDP) of the Republic of Armenia and Trends of Changes

Ашот Маркосян, Элянора Матевосян. Структурные изменения в экономике (ВВП) Республики Армения и их тенденции

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱՐՈՒՅՍԵՐԻ ԱՃԵՑՄԱՆ ՌԻՍԿԱՅԼՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԶՅՈՒՄ*

ՀՐԱՆՏ ՀԱՅՐԱԴԵՏՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսներ, հաշվապահական հաշվառում ամբիոնի ասպիրանտ, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն hrant.hayrapetyan@inbox.ru

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության առանցքային ոլորտներից է, որ բացառիկ կարևոր նշանակություն ունի երկրի պարենային անվտանգության ապահովման գործում: Նշվածի հետ մեկտեղ՝ գյուղատնտեսությունը առանձնակի կարևորվում է գյուղական բնակավայրերում եկամուտների ձևավորման, կենսամակարդակի ապահովման, ինչպես նաև գյուղական բնակավայրերի պարզացման համար:

Ուսումնասիրության հիմնական նպատակն է բացահայտել գյուղատնտեսության դերն ու նշանակությունը, հիմնախնդիրները, առկա խնդրահարույց իրավիճակները ԶԳ-ում:

Ուսումնասիրության առջև դրված խնդիրներն են՝

**- բացահայտել ոլորտի բարձր ռիսկայնության պատճառները,
- գնահատել տարերային երևույթների ազդեցությունը և բաշխվածությունը ԶԳ մարզերի կտրվածքով,**

- ներկայացնել հնարավոր լուծումներ արդի հիմնախնդիրների լուծման համար:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են վերլուծական, անալիտիկ, սինթետիկ, դիալեկտիկական, համակարգակառուցվածքային, համեմատական մեթոդները:

Հայաստանի աշխարհագրական դիրքի, տարածքի արտահայտված ուղղաձիգ գոտիականության, լեռնային ռելիեֆի կտրտվածության, սակավահողության և հողի ոչ բավարար խոնավության պատճառով Հայաստանը դասվում է երկրագործության տեսանկյունից ծայրահեղ ռիսկային երկրների շարքին: Ընդ որում, հողերի ավելի քան 70%-ը բնութագրվում է անապատացման հատկանիշերով և հողերի դեգրադացիայի տարբեր աստիճաններով:

Ոլորտի առաջնահերթ խնդիրն ենք համարում մի շարք միջոցառումների իրականացմամբ բարելավել գյուղատնտեսությունը ԶԳ-ում:

Հիմնաբառեր՝ *գյուղատնտեսություն, արդի իրավիճակ, հիմնախնդիրներ, պարզացման հեռանկարներ, հող, վտանգավոր երևույթներ:*

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հաղթահարման գործընթացում մեծ տեղ է հատկացվում գյուղատնտեսության զարգացմանը: Գյուղատնտեսությունը ոչ միայն ագրոպարենային համալիրի, այլև ամբողջ տնտեսության առավել բարդ ու աշխատատար ճյուղն է և վճռական դեր ունի հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման գործում:

* Հոդվածը ներկայացվել է 12.02.2020թ., գրախոսվել՝ 24.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

Գյուղատնտեսության ոլորտը տնտեսությունում ամենառիսկայիններից է: Այստեղ երկարաժամկետ կապիտալ ներդրումները (ջրանցքի ու ջրամբարի կառուցում, պտղատու ու խաղողի այգու հիմնում, թեթև լանջերի դարավանդում, աղոտ հողերի յուրացում, ջրեան կայանի կառուցում, արոտների ստեղծում) կարող են չփոխհատուցվել նախագծային ժամկետում, կամ առհասարակ չփոխհատուցվել, ինչը կարող է հանգեցնել ֆինանսատնտեսական սպառնալից հետևանքների: Վտանգից զերծ չեն նաև ամենամյա արտադրական ծախսումները: Դա պահանջում է ռեսուրսների (հողի, ջրի, աշխատանքի, սերմի ու տնկանյութի, պարարտանյութի ու թունանյութի, բնական ռեսուրսի) բազմակողմանի իմացություն, դրանց օգտագործման արդյունավետության գնահատման ունակություն: Բարձրորակ ռեսուրսները, դրանց տնտեսական ճիշտ գնահատումն ու օգտագործումը ցանկալի արդյունք չեն տա արտադրության ոչ ռացիոնալ մասնագիտացման, շուկայի անբավարար իմացության պարագայում:²¹⁹

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսական բարեփոխումները շարունակվում են և նախադրյալներ են ստեղծում գյուղատնտեսության արտադրությունը գիտական հիմունքներով զարգացնելու ուղղությամբ: Կարևորագույն խնդիր է՝ հնարավորինս նվազեցնել բնակչության սննդամթերքով ապահովումը ներկրումների հաշվին և ավելացնել արտահանման ծավալները:

Ագրարային ոլորտում ստեղծված նոր տնտեսական հարաբերություններն առաջ են բերել լուծման ենթակա մի շարք արմատական հիմնահարցեր, որոնք տնտեսական բարեփոխումների իրագործման գործընթացում պահանջում են տնտեսագիտական խոր ուսումնասիրություններ և դրանցից բխող գիտականորեն հիմնավորված առաջարկություններ:

Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացումը պահանջում է այնպիսի միջոցառումներ, որոնց իրագործումը կխթանի գյուղացիական և այլ տնտեսությունների շահագրգռվածությունը՝ հողօգտագործման բարձր արդյունավետության հասնելու գործում:

Եթե 2016 թվականին Հայաստանում արտադրվել է 6 217 03 տոննա ցորեն, ապա 2018 թվականին բերքի ծավալը կազմել է ընդամենը 3 376 50 տոննա, որը կազմում է 2016-ի ցուցանիշի գրեթե կեսը: 2018 թվականին բանջարեղենի ցուցանիշերի ուղղությամբ 2017 թ.-ի համեմատ կրկին ցուցանիշերի անկում է գրանցվել: 2017թ.-ին բանջարեղենի ցուցանիշը կազմել է 8 610 02 տոննա, իսկ 2018թ.-ին՝ 6 281 59 տոննա:²²⁰

Վերջին տարիներին իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղված են հանրապետության գյուղատնտեսական հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանը, հացահատիկային տնտեսության զարգացմանը և հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Առատ ու բարձր բերքի ստացման երաշխիքը վտանգավոր, տարերային աղետների կողմից պատճառված վնասների ուղղությամբ միջոցառումների ու ծրագրերի իրականացումն է, որոնց համար նախ պետք է ուսումնասիրել տարերային, վտանգավոր երևույթների հաճախականությունը, քանակը և տեսակները ՀՀ-ում:

ՀՀ գյուղատնտեսությունը մեծ վնաս են հասցնում հիդրոոգերևութաբանական վտանգավոր երևույթները (երաշտ, խորշակ, կարկտահարություն, ցրտահարություն), որոնց հաճախականությունն ու տևողությունը վերջին տասնամյակներում կլիմայի փոփոխության հետ կապված աճման միտում ունի (տես՝ աղյուսակ 1):

²¹⁹ **Գրիգորյան Կ.Ա., Սանասարյան Ա.Ա., Գրիգորյան Ն.Կ.,** Ագրարային տնտեսագիտություն, Երևան ՀԱԱՀ, 2013թ., էջ 9:

²²⁰ Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, https://www.armstat.am/file/article/sv_12_17a_122.pdf:

Աղյուսակ 1.

Գրանցված տարերային վտանգավոր երևույթների քանակն ըստ տեսակի, 2016-2018թ.²²¹

Դեպքերն ըստ տեսակի	Դեպքերի քանակը, միավորը		
	2016	2017	2018
Ուժեղ քամի, փոթորիկ, մրրիկ, պտտահողմ, փոշեփոթորիկ	28	32	34
Կայծակնահարում	1	4	6
Կարկուտ	24	39	46
Տեղատարափ անձրև	4	7	12
Սողանք, հողասահք	2	2	4
Սելավ	1	1	1
Բուք, ձյունահողմ	3	2	5
Սառցամածություն	14	18	21
Ձևահյուս	0	1	1
Անտառային հրդեհ	17	15	21
Ցրտահարություն	2	4	4
Հեղեղում, գետերի վարարումներ	11	8	10
Քարաթափվածք	4	6	43
Ընդամենը	83	107	175

Համաձայն աղյուսակ 1-ի տվյալների՝ 2016-2018 թվականների ընթացքում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթները տարեցտարի ավելացել են: Երաշտները և ուշ գարնանային ցրտահարություններն ավելի շատ սպառնում են Արարատի ու Արմավիրի մարզերին, իսկ կարկուտն առավել վտանգավոր է Շիրակի, Արագածոտնի և Արմավիրի մարզերի համար:

2018 թվականի ընթացքում ռիսկային աղետները ավելացել են 2017 թվականի նկատմամբ մոտավորապես 70%-ով: Այսպիսով՝ պետք են լուծումներ, որոնք կնվազեցնեն ռիսկային աղետների քանակն այն գոտիներում, որտեղ ունենք մշակաբույսերի համար նախատեսված արտեր: Ամեն տարի ավելացող հակակարկուտային կայանները չեն արդարացնում սպասելիքները և չեն կարողանում բավարար չափով պաշտպանել կարկուտից: Կարկուտի տեղումների քանակը ամեն տարի ավելի ու ավելի է աճում:

²²¹ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, տարեկան հաշվետվություններ, <http://mes.am/hy/vichakagrutyun/>

Կլիմայի կանխատեսվող փոփոխության հետ կապված՝ գյուղատնտեսության վրա հիմնականում բացասական ազդեցություն են ունենում հունիսի կեսերից դիտվող երաշտները: Իրավիճակն ավելի շատ կարող են սրել երաշտների հետ ժամանակի առումով համընկնող խորշակները (առավելապես 5-10 մ/վրկ արագության հարավային քամիները): Այդ երևույթը պարբերաբար նկատվում է Սյունիքի, Վայոց ձորի, Արմավիրի, Արարատի ու Արագածոտնի մարզերում: Գյուղատնտեսությունում ջրի ամենամեծ պահանջարկը սովորաբար նկատվում է ապրիլ-մայիս ամիսներին, ինչն էլ գարնանային երաշտները դարձնում է ամենավնասակարը, քանի որ դրանք համընկնում են մշակաբույսերի աճի առաջին փուլի հետ: Գործնականում երաշտների ու խորշակների առումով հարաբերական բարենպաստ պայմաններ ունի միայն Արարատյան դաշտը, որտեղ գյուղատնտեսական հողերի շուրջ 95%-ը ոռոգվող են:

Աղյուսակ 2.

Գրանցված տարերային վտանգավոր երևույթների քանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2016-2018թ.²²²

Մարզեր	Դեպքերի քանակը, միավոր		
	2016	2017	2018
ք.Երևան	20	22	24
Արագածոտն	9	11	15
Արարատ	2	2	4
Արմավիր	3	5	5
Գեղարքունիք	12	16	20
Լոռի	21	24	27
Կոտայք	10	15	18
Շիրակ	22	24	26
Սյունիք	17	19	22
Վայոց ձոր	42	45	50
Տավուշ	8	11	14
ընդամենը	166	194	225

Համաձայն աղյուսակ 2-ի՝ մարզերում տարերային վտանգավոր երևույթները մեծամասամբ տեղի են ունենում Վայոց ձորում, որին հաջորդում է Շիրակի մարզը և Լոռու մարզը:

²²² ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, տարեկան հաշվետվություններ, <http://mes.am/hy/vichakagrutyun/>

Վերջին տարիներին երաշտից, կարկուտից, հեղեղումներից, գարնանային ցրտահարություններից ու սելավներից գյուղատնտեսությանը հասցված ամենամյա վնասը գնահատվում է շուրջ 15-30 մլրդ դրամ: Ընդ որում, վնասի մեծ մասը բաժին է ընկնում կարկուտահարությանը: Կլիմայի փոփոխության համաձայն՝ հնարավոր է գարնանը և ամռանը ամպրոպների ու կարկուտի ուղեկցությամբ անկայուն եղանակների հաճախականության աճ: Այդ դեպքում առավել խոցելի կլինեն Հայաստանի հյուսիսային ու հարավային մարզերի միջին լեռնային գոտու գյուղատնտեսական հանդակները: Ներկայումս Հայաստանում մշակվող հողերի գրեթե կեսը ոռոգվում են և նրանց բաժին է ընկնում բուսաբուծության արտադրանքի մոտ 70%-ը: Յուրաքանչյուր տարի կարկուտի պատճառով վնասվում են հանրապետության այգետարածքների 10-15%-ը, որոշ դեպքերում կարկուտահարված տարածքներում բերքի կորուստը կազմում է 80-100%: Կարկուտահարությունից վնասված բերքը կորցնում է ապրանքային տեսքը, որի պատճառով դժվարանում է դրա իրացումը, զգալիորեն նվազում են տնտեսվարողների եկամուտները: Ուժեղ կարկուտահարված այգիների վերականգնման համար պահանջվում է առնվազն մեկ տարի և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ՝ այգիներում լրացուցիչ ետի, պարարտացման և ազրոտեխնիկական այլ միջոցառումների իրականացման համար²²³:

Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է ընդարձակ տարածքների վրա բազմաբնույթ ուղղություններով, որը լրացուցիչ ծախսեր ու ջանքեր է պահանջում բնակլիմայական աղետների կառավարման համար:

2018 թվականին Արմավիրի մարզում կարկուտահարության առաջին դեպքը գրանցվել է մայիսի 8-ին և շարունակաբար մարզում կարկուտաբեր պրոցեսներ են եղել: Մինչև հունիսի 20-ը տեղացած կարկուտահարության հետևանքով վնասվել են մարզի 25 համայնքների շուրջ 1100 հա հողատարածքներ:

Արմավիրի մարզի 7 համայնքներում տուժած պտղատու այգիների տարածքը կազմում է շուրջ 539.5 հեկտար, իսկ խաղողի այգիներինը՝ 122 հեկտար: Ընդ որում, պտղատու և խաղողի այգիների բերքի կորուստը կազմում է 20-90%:

Արմավիրի մարզի Արգիևա, Զարակերտ, Շենիկ, Արտամետ, Բաղրամյան, Կողբավան, Գուշակերտ, Արագածոտնի մարզի Արագածավան ու Արտենի, Վայոց ձորի Ռինդ, Աղավաճոր ու Զիվա, Արարատի մարզի հիմնականում Կանաչուտ ու Այգեստան համայնքներում տուժել են շուրջ 1454 հեկտար տարածքներ, այդ թվում՝ շուրջ 1059 հեկտար պտղատու այգիներ և 395 հեկտար խաղողի այգիներ: Նշված մարզերում տուժած 1059 հեկտար պտղատու այգիներում վնասը կազմում է շուրջ 3700 տոննա, իսկ խաղողի այգիներինը՝ 1650 տոննա: Ընդհանուր գումարային արտահայտությամբ վնասի նախնական չափը կազմել է շուրջ 1 մլրդ 142 մլն դրամ, որից 836 մլն դրամը պտղատու այգիներինն է, իսկ շուրջ 306 մլն դրամը՝ խաղողի այգիներինը:

Արագածոտնի մարզի երկու համայնքներում 2018 թվականին տուժել են 329 հեկտար պտղատու այգիներ (վնասը՝ մոտ 20-60%) և 50 հեկտար խաղողի այգիներ (30-60%): Վայոց ձորի 3 համայնքներում տուժել են շուրջ 190.4 հեկտար պտղատու այգիներ (30-75%) և շուրջ 223 հեկտար խաղողի այգիներ (50-75%): Տարեկան հանրապետությունում կարկուտահարությունների արդյունքում տարբեր աստիճանի վնասներ են կրում 150-200 համայնքներ:²²⁴

Գյուղատնտեսությանը մշտապես բնորոշ բազմաթիվ ու բազմապիսի ռիսկերը բացասական ազդեցությունն են ունենում ոլորտի կայունության ու զարգացման վրա՝

²²³ Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգ, կետ 3:

²²⁴ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, հարցազրույցներ, <http://minagro.am/2018/08/%d5%b8%d5%9e%d6%80-%d5%b4%d5%a1%d6%80%d5%>:

պայմանավորված ինչպես բնակլիմայական (կարկուտ, ջրհեղեղ, ցրտահարություն, երաշտ, փոթորիկ և այլն), այնպես էլ դրանից տարբեր մարդածին ու տնտեսական գործոններով: Ռիսկերի առկայությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է ստեղծում դրանք կառավարելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար, որոնց իրականացման նպատակով նախևառաջ կարևոր է իրականացնել գյուղատնտեսության բնագավառին հատուկ ռիսկերի դասակարգում՝ ըստ դրանց առաջացման պատճառների: Սովորաբար, գոյություն ունեն գյուղատնտեսությանը հատուկ ռիսկերի տարբեր դասակարգումներ, որոնք կարելի է ընդհանրացնել հետևյալ խմբերում.²²⁵

1. Բնության բացասական ազդեցությամբ պայմանավորված բնակլիմայական ռիսկեր, որոնք հանդես են գալիս տարբերային աղետների, կենդանիների, բույսերի հիվանդությունների, կլիմայական փոփոխությունների և այլնի տեսքով,
2. Սանիտարական ռիսկեր՝ կրծողներ, վնասատուներ, համաճարակ, զանազան հիվանդություններ և այլն,
3. Շուկայական ռիսկեր՝ կապված գյուղատնտեսական ապրանքների տեղական կամ միջազգային շուկաների գնային տատանումների, ապրանքների նկատմամբ սահմանված որակական պահանջների փոփոխությունների և այլնի հետ,
4. Օրենսդրական ռիսկեր, որոնք ի հայտ են գալիս օրենսդրությամբ սահմանված նորմերի չպահպանման կամ դրանց փոփոխության դեպքում նոր օրենքների հնարավոր բացասական ազդեցությամբ,
5. Արտադրության գործոնների քանակական ու որակական փոփոխություններ, որոնք արտահայտվում են բույսերի սերմերի, պարարտանյութերի որակի վատացմամբ, օգտագործվող տեխնիկական միջոցների անսարքությամբ, արտադրողականության կրճատումով և նմանատիպ այլ գործոններով,
6. Մարդկային գործոնով պայմանավորված և նախորդ խմբերում չընդգրկված այլ ռիսկեր՝ հակամարտություններ, ֆինանսատնտեսական ճգնաժամեր, գյուղատնտեսական կենդանիների սպանդ և կորուստ, գյուղատնտեսական գույքի կողոպուտ, վնասում և այլն:

Նշված խմբերից ամենաառանձնահատուկը բնակլիմայական ռիսկերն են (կարկուտ, ցրտահարություն, երկրաշարժ, փոթորիկ, ջրհեղեղ, սելավ, կայծակ, գերխոնավություն և այլն), որոնք աչքի են ընկնում ինչպես մեծ անորոշությամբ, այնպես էլ քանակական ու ծավալային մեծությամբ: Այս խմբի ռիսկերի պարագայում մարդկային գործոնը կամ մարդու ազդեցությունը շատ ավելի փոքր է, իսկ երբեմն էլ՝ անհնար: Բնակլիմայական ռիսկերից Հայաստանի Հանրապետությանն առավել բնութագրական են կարկտահարությունը, ցրտահարությունը, երաշտն ու հեղեղումները:

Ջրհեղեղներ: Հայաստանում ջրհեղեղները զարևանային վարարումների տեսքով հիմնականում ձևավորվում են զարևան ամիսներին ձյան ինտենսիվ հալոցքի և առատ տեղումների զուգորդման հետևանքով: Գետերի ծավալը նորմայից երբեմն ավելանում է մինչև տասն անգամ: Ջրհեղեղների ավելի հակված են Արաքս, Հրազդան և Աղսուև գետերի ավազանները: Մեղրիի, Վեդու և Գորիսի գետերի ավազաններում վարարումները միջինում տեղի են ունենում երկու տարին մեկ անգամ: Երկրի շատ մասերում տեղատարափ անձրևներն ու հալվող ձյունն ավելացնում են ջրհեղեղային ու սելավային ռիսկերը: Հայաստանում դիտվում է հեղեղումների և դրանց հետ կապված հետևանքների աստիճանական աճ: 1994 թվականից մինչև 2018 թվականն ընկած ժամանակահատվածում հեղեղումների տնտեսական վնասը կազմել է 74 մլն ԱՄՆ դոլար,

²²⁵ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2015/01/15_0039_1.pdf:

այդ թվում՝ Լոռու մարզում՝ 32 մլն ԱՄՆ դոլար, Շիրակում՝ 27 մլն ԱՄՆ դոլար, Տավուշում՝ 12 մլն ԱՄՆ դոլար, Գեղարքունիքում՝ 4,8 մլն ԱՄՆ դոլար:

Երաշտներ: Երաշտային պայմանները առաջանում են անձրևների երկարատև բացակայության և բարձր ջերմաստիճանի պայմաններում: Այդ պայմաններն ավելի են խորանում և ինտենսիվանում բարձր ջերմաստիճանի և քամու առկայության պայմաններում, որն առաջ է բերում բույսերի տրանսպիրացիայի մեծացում, հարաբերական խոնավության նվազեցում, հողի մակերեսից գոլորշիացման ինտենսիվացում, խոնավության պակասորդի ավելացում: Արդյունավետ խոնավության պաշարները արագ ծախսվում են և չեն կոմպենսացվում մթնոլորտային տեղումներով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետության ցածրադիր հովտային գոտիներում երաշտները դիտվում են 92-94%, Նախալեռնային գոտիներում՝ 52-57% հաճախականությամբ, իսկ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում հասնում են 40-50%-ի: Արարատյան դաշտում և ցածրադիր այլ գոտիներում բարձր ջերմաստիճանով և տաք քամիներով օրերի թիվը տարեկան կազմում է 120-ից 160, ինչն այդ շրջանները դարձնում է առավել խոցելի երաշտի նկատմամբ: Հայաստանում երաշտ սովորաբար արձանագրվում է հուլիս-սեպտեմբեր ժամանակահատվածում, սակայն կարող է տեղի ունենալ նաև գարնանն ու աշնանը: Ընդհանուր առմամբ, երևույթը հատուկ է Արարատյան դաշտավայրին և երբեմն՝ Արարատյան հարթավայրի Նախալեռնային հատվածին, Տավուշին և Սյունիքի հովիտներին: Երաշտի հաճախականությունը մոտավոր հաշվարկներով կարող է լինել 2-4 տարին մեկ անգամ: Երաշտները բացասաբար են ազդում բնական էկոհամակարգերի վրա՝ խորացնելով անապատացման գործընթացները և նպաստելով երկրորդային աղակալմանը: Ենթակառուցվածքների վատթարացման, էլեկտրաէներգիայի գնի աճի, Ներդրումների բացակայության և այլ գործոնների պատճառով մշակվող ոռոգելի տարածքների մակերեսը 1991 թվականի 314.0 հազ. հեկտարից կրճատվել է մինչև 154.0 հազ. հեկտարի (առանց բնակավայրերի հողերի): Երկարատև օդերևութաբանական երաշտների հետևանքով ջրային ռեսուրսները կրճատվում են 20-ից մինչև 45%-ով:

Կարկուտ: Գյուղատնտեսության ոլորտում բնական վտանգների թվում կարկուտն առավել ծանրն է: Կարկուտի առաջացումը և զարգացումը պայմանավորված է մինչև 30 մ/վրկ արագության հասնող ուժեղ վերընթաց հոսանքներով: Հայաստանի Հանրապետության տարածքում այն դիտվում է ճակատային ու ներզանգվածային գործընթացների ժամանակ: Ներզանգվածային կարկուտային գործընթացները դիտվում են գարնանը և ամռան առաջին կեսում, երբ մեծ են լինում կոնվեկտիվ հոսանքներն ու խոնավությունը: Ամենակտիվ կարկուտային գործընթացները դիտվում են, երբ երկրորդ կարգի ցուրտ ճակատը անցնում է հանրապետության տարածքով ցերեկվա երկրորդ կեսին, որին զուգարվում են նաև կոնվեկտիվ հոսանքները: ՀՀ տարածքի ռելիեֆային պայմանների բազմազանությունը պայմանավորում է կարկուտի հաճախականության մեծ տարբերություններ: Դրա պատճառած միջին տարեկան վնասը կազմում է 30-40 մլն ԱՄՆ դոլար: Կարկուտավտանգավորության առումով խոցելի տարածքներում գտնվում է մոտ 370 գյուղական համայնք: Կարկուտից տուժում է երկրի գյուղական բնակավայրերի 15-ից 17 տոկոսը: Հայաստանում կարկուտահարությունները տեղի են ունենում շոգ սեզոնին՝ մարտից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Կարկուտ առավել հաճախ լինում է ապրիլ-հունիս ամիսներին, իսկ խոշոր հատիկներով՝ հուլիս-օգոստոսին: Կարկուտներն առավել հաճախակի են տեղում Արարատյան դաշտում, Շիրակում, Լոռիում, Տավուշում, Արագածոտնի բարձրադիր գոտիներում, Գեղարքունիքում և Կոտայքի լեռնային գոտիներում, միջինը՝ տարեկան 4-5 դեպք: Հովտային գոտիներում կարկուտի հաճախականությունն ավելի ցածր է՝ տարեկան 1-2 անգամ:

Սողանքներ և սելավներ: Սողանքը պարբերական բնույթ ունեցող ֆենոմեն է, որը կարող է տարիներով թաքնվել և արթնանալ մեկ ակնթարթում: Հայաստանում այս

Ֆենոմենը երկրաշարժից հետո երկրորդն է բնական աղետների շարքում: Հայաստանում շուրջ 122.0 հազ. հեկտար հողեր խոցելի են սողանքներից, որոնց պատճառների թվում են հորդառատ անձրևները: Սողանքների առաջացմանը նպաստում են խմելու ջրի և ոռոգման համակարգերի արտահոսքերը, ինչպես նաև լեռնալանջերի անտառահատումները: Սելավները ևս լուրջ սպառնալիք են միջին բարձրության վրա գտնվող լեռնային շրջաններում: Ըստ ուսումնասիրությունների՝ մինչև 2009 թվականը Հայաստանում տեղի են ունեցել տարբեր չափի ավելի քան 3500 սողանքներ: Դրանց 90 տոկոսը գտնվել է 2000-1500 մ և ցածր բարձրությունների վրա, մյուսներն արձանագրված են 2200-2400 մ բարձրությունների վրա և հազվադեպ են հանդիպում 2500-2600 մ ավելի բարձրությունների վրա: Ըստ Համաշխարհային բանկի ուսումնասիրության՝ Հայաստանում սողանքների հետևանքով առաջացած վնասը գնահատվում է մոտ 11.5-13.0 մլն ԱՄՆ դոլար, իսկ սելավների վնասը՝ 5.7-ից մինչև 7.1 մլն ԱՄՆ դոլար:

Ցրտահարություն: Հայաստանում մեծ վտանգ են ներկայացնում ուշ գարնանային ցրտահարությունները, երբ մատղաշ մշակաբույսերի սածիլները, ծիլերը, բույսերի ծաղիկները վնասվում են բացասական ջերմաստիճաններից: Վաղ աշնանային ցրտահարությունները վնասակար են չհավաքված բերքի, ջերմասեր բանաջարաբոստանային կուլտուրաների, խաղողի համար: Ուշ գարնանային և վաղ աշնանային ցրտահարությունները հանրապետության տարածքում հիմնականում պայմանավորված են հյուսիսային շրջաններից ցուրտ օդային զանգվածների ներխուժումով: Դիտվում են աղվեկտիվ, ռադիացիոն և աղվեկտիվ-ռադիացիոն ցրտահարություններ: Դրանք ավելի հաճախ դիտվում են տեղանքի ցածրադիր մասերում, երբ սառը ու տաք օդը իջնում է ռելիեֆի գոգավոր մասերը: Ցրտահարությունների բաշխման առանձնահատկությունն այլ օդերևութաբանական էլեմենտների համեմատությամբ այն է,, որ ցրտահարությունները տարբեր բարձրության կլիմայական գոտիներում օրերի քանակով էապես չեն տարբերվում, քանի որ դրանց առաջացումն ըստ բարձրությունների ուշանում կամ չուտ է սկսվում պայմանավորված տվյալ բարձրության վրա բույսերի վեգետացիայի սկսվելու և վերջանալու հետ: Վերջին տարիներին նկատվում է ցրտահարությունների հաճախականության և ինտենսիվության աճ: Ցրտահարություններն առավել հաճախ դիտարկվում են հանրապետության հովտային գոտիներում, մասնավորապես՝ Արարատյան դաշտավայրում և դրա նախալեռնային մասում, Տավուշում և Սյունիքի հովիտներում, միջինը՝ տարեկան երեք անգամ: Լեռնային գոտիներում ցրտահարության դեպքերն այնքան էլ բնորոշ չեն և գործնականում մեծ վնաս չեն հասցնում գյուղատնտեսությանը²²⁶:

Կառավարության գյուղատնտեսական քաղաքականության առանցքը լինելու է գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, արդի տեխնոլոգիաների ներմուծումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեղթայում ընդգրկված բոլոր սուբյեկտների՝ փոքր տնային տնտեսությունների, գյուղացիական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամտաբերության բարձրացումը:

1. Արդյունավետության բարձրացման համար պետք է կատարել մի քանի բարելավում, որի մեջ կմտնի գյուղտեխնիկայի անտոկոս վարկավորումը գյուղացիների գնման համար: Տեխնիկական կոզնի ստանալ ավելի էժան և ավելի մեծ քանակով գյուղմթերք:

²²⁶ Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգ, կետ 34, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=89460>:

2. Պետության կողմից ներդրվի ծրագիր, որի միջոցով ստեղծվի պահանջարկ կոնկրետ մշակաբույսերի նկատմամբ, որոնք գյուղացիների կողմից արտադրվելուց հետո վաճառվեն որոշակիորեն տեղակայված հարթակներում:

3. Արտահանման համար պետք են մեքենաներ: Այդ մեքենաները արժեն մեծ գումարներ, և դրանց գնումը գյուղացիների կողմից համարյա թե անհնարին է: Կան որոշ կազմակերպություններ, որոնք զբաղվում են գյուղվթերքի արտահանմամբ, բայց դրանք քիչ են և վարում են մոնոպոլիստական քաղաքականություն: Պետք է օգնել նոր սուբյեկտներին. փոքր մասշտաբներով գնել մեքենաներ, և ստեղծել մրցակցություն՝ խուսափելով մոնոպոլիստներից:

Կառավարությունն անթույլատրելի է համարում, որ գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 1/3-ը մնացել է անմշակ: Հայաստանում ոռոգման ջուրը նույնքան հասանելի և տարածված պետք է լինի, ինչպես էլեկտրամատակարարումն է տարածված ու հասանելի: Նոր տեխնոլոգիաների կիրառումը պետք է լայնորեն տարածվի գյուղատնտեսության ոլորտում: Կաթիլային և անձրևացման համակարգերի ներդրումը հնարավորություն կտա էապես խնայելու ջրային ռեսուրսները, իսկ ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման պետական աջակցության ծրագիրը՝ հողային ռեսուրսները: Գյուղատնտեսության զարգացման համար լրջագույն խնդիր է արդյունավետ հակակարկտային համակարգի բացակայությունը, որին հասնելու համար կառավարությունը պարտավորվում է բարձրացնել սուբսիդավորման մեխանիզմների հասցեականությունը՝ ապահովելով շահառու համայնքների կարիքների բավարարման հստակ մեխանիզմներ: Կառավարությունը նաև գործուն քայլեր է ձեռնարկելու մեքենատրակտորային համակազմի թարմացման և Հայաստանի գյուղատնտեսության կարիքներն առավելագույնս բավարարելու ուղղությամբ: Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների ավելացման ներուժն օգտագործելու գործում կառավարությունը նախատեսում է մշակել դեպի նոր շուկաներ արտահանմանն աջակցող մեխանիզմներ: Նոր տեխնոլոգիաների և գիտական հենքի վրա հիմնված մրցունակ ու արդյունավետ գյուղատնտեսություն ստեղծելու ճանապարհին կառավարությունը խնդիրներ է դրել:²²⁷ Այդ խնդիրներից առանձնացնենք այս պահին մեզ հետաքրքրողները.

- ✓ ապահովել գյուղատնտեսական արտադրողների շրջանում գյուղատնտեսությանն առնչվող գիտելիքների, նորարարությունների ներդրման փորձի տարածման և տեղեկատվության հասանելիության համակարգի ներդրումը,
- ✓ ապահովել գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության համակարգի ներդրումը,
- ✓ սահմանել գյուղատնտեսությանն աջակցության հիմնական սկզբունքները, մեթոդաբանությունը և ռազմավարությունը:

Գյուղատնտեսության բազմաթիվ փոքր տնտեսությունների ապահովագրումը բարդ գործընթաց է, որը զգալի գործառնական ծախսեր է պահանջում, իսկ ամենակարևորը՝ ոլորտի ռիսկերը մեծ են, և ապահովագրական կառույցները խուսափում են այստեղ գործունեություն իրականացնելուց: Բացի այդ, շուրջ 340000 փոքր գյուղացիական տնտեսությունների վճարունակությունը դեռևս ցածր է, և հիմնական ռիսկերից պաշտպանության համակարգերը զարգացած չեն: Ոլորտի և հանրապետության առանձնահատկություններով պայմանավորված՝ ռիսկերի կառավարման դժվարությունները բազմազան են, սակայն փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության մեջ նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, ռիսկերի կանխարգելման հնարավորությունների ընդլայնումը, միավոր տարածության հաշվով

²²⁷ ՀՀ կառավարության ծրագիր, 8 փետրվարի 2019թ. N 65 - Ա, էջ 50
<https://www.gov.am/files/docs/3133.pdf>:

ստացվող եկամտի ավելացումը և պետության մասնակցությամբ ապահովագրական համակարգի ներդրումը հնարավորություն են ընձեռում հարթահարելու այդ դժվարությունները:

Պարտադիր կերպով նորարարությունների ներդրման ծրագրի մշակում է հարկավոր գյուղատնտեսության ոլորտում: Բացակայում են իսպառ ցանցապատ այգիները, որոնք կլինեն պաշտպանված կարկուտից, և կապահովեն պարենի անվտանգությունը: Ցանցերի գնման ու ներդրման գործնառնքի պետք է ամբողջովին լինի պետության կողմից սուբսիդավորմամբ կամ բանկերի կողմից շատ փոքր տոկոսներով վարկերի տրամադրմամբ: Նորարարություններից մեկը պետք է լինի նաև գյուղատնտեսական վարկերի դեպքում պարտադիր ապահովագրությունը: Թեև այսօր աշխատանքներ են տարվում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման ուղղությամբ, բայց, այնուամենայնիվ, չունենք գյուղատնտեսության ապահովագրություն:

Բանկերի կողմից պետք է գյուղմթերքի վերամշակման գործարանների բացման համար տրամադրվեն վարկեր, որոնք նախատեսված լինեն փոքր ու միջին բիզնես կառուցելու համար և ոչ մի դեպքում չխթանեն մեծ բիզնես վարողներին: Այս քայլը կխթանի գյուղերում գյուղացիների կողմից վերամշակման կամ փաթեթավորման փոքր գործարանների կառուցումը, որոնք կտան բավականին էժան և որակյալ պրոդուկտներ: Այդ պրոդուկտները կունենան պիտանելության ավելի երկար ժամկետ, չեն վնասվի տեղափոխման ժամանակ, որի շնորհիվ թափոնի չափը կնվազի: Պրոդուկտները կունենան ավելի ներկայանալի տեսք և կլինեն ավելի հեշտ տեղափոխելի: Այսպիսով՝ ստացված պրոդուկտները ավելի հեշտ կմրցակցեն թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում:

Գյուղատնտեսությունը, որպես ինքնակառավարվող և ինքնազարգացող օղակ, պարտադիր չէ ֆինանսավորվի պետության կողմից, ինչպես նաև ամեն տարի օգնի գյուղացիներին գումարով կամ սառեցնի, հետաձգի գյուղվարկերը, որոնք գյուղացիները ծախսել են բերքի ստացման վրա և բնական աղետների պատճառով վնասներ կրել: Այդ ամենի փոխարեն պետք է օգնել գյուղացուն՝ ստեղծելու բնական աղետներից հնարավորինս պաշտպանված հողատարածքներ, ջրամատակարարում, տալու նրան բերքի ու վարկի ապահովագրման հնարավորություն, ստեղծելու հարթակներ գյուղմթերքի վաճառքի համար, որտեղ գյուղացին մրցակցային պայմաններում միանշանակ կհաղթի բոլոր ներմուծողներին և վերավաճառողներին, քանի որ կլինի պաշտպանված, ուժեղ և կտա բոլորից ավելի էժան վերջնական պրոդուկտ:

Առաջարկվում է անպայման ներդնել ծրագիր, որի միջոցով Հայաստան կներմուծվեն հակակարկտային ցանցեր: Այդ ցանցերը ապահովում են աշխարհում ամենաբարձր պաշտպանելության տոկոսը: Այսպիսով՝ գյուղատնտեսության համար նախատեսված պաշտպանիչ ցանցերի օգտագործման ժամկետը կազմում է 18-ից 25 տարի: Ցանցի լայնությունը կազմում է 2-ից մինչև 5 մետր: Ռուսաստանում 1 մետր քառակուսի ցանցի գինը կազմում է ընդհամենը 20-23 ռուբլի, որի մեջ արդեն իսկ ներառված են հարկերը: Հայաստան ներմուծելու դեպքում կամ ՀՀ-ում հակակարկտային ցանցերի արտադրությունը կտա մեզ ավելի ցածր գին:

Ցանցի ընտրության հարցում կարևոր է հաշվի առնել պարտեզի վիճակը՝ ամրացումների համար տարածքի առկայությունը, գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրությունը, տեղադրման գինը:

Հակակարկտային ցանցերի տեխնիկական բնութագրերն են՝

Բաղադրությունը.

Հատուկ հավելանյութերով կայունացնող բարձր խտության պոլիէթիլենի (HDPE ԱՐՏ տեսակի) արտադրություն, որի հիմնական նպատակն է կանխել

ցանցի վատթարացումը (ուլտրամանուշակագույն, ծառերի քիմիական բուժում, անձրև և այլն):

Հակակարկտային ցանցերի տեղադրման տեսակը.

Անցքերի և տեղադրման տեսակը կախված է մի շարք գործոններից՝ հողի և մրգերի հատկություններից, կլիմայական պայմաններից, տնկման ուրվագծերից և այլն:

Կան երկու տեսակի տեղադրման կառուցվածքներ՝

- Թեք ցանցեր, որոնց տեղադրումը ապահովում է ավելի մեծ տարածք ծառերի և մշակաբույսերի համար, միանգամից հեռացվում է կարկուտը ցանցի վրայից. տեսակը տարածված է պրոֆեսիոնալ ֆերմերների շրջանում:

Կողմ

- տարածված ձև է (պրոֆեսիոնալ այգեպանների ընտրությունն է),
- բարձր հուսալիություն,
- օգտագործման հեշտություն,
- ցանցի օգտագործման ավելի մեծ ժամկետ:

Դեմ

-տեղադրման համեմատաբար բարձր գին

- Հորիզոնական ցանցերը այսօր ամենատարածվածն են տեղադրման հեշտության պատճառով: Ամենից հաճախ օգտագործվում են տանձի և խնձորի այգիներում:

Կողմ

- տարածքի խնայողություն,
- տեղադրման հեշտությունը՝ առանց լրացուցիչ կյուլթերի,
- պաշտպանություն արևից (օգտակար մթնեցում) և կարկուտից:

Դեմ

- տարեկան ավելի բարձր խնամքի ծախսեր,

- կոնստրուկցիան պահանջում է անընդհատ հետևողական աշխատանքներ,
- ցանցի վնասվելու ավելի մեծ հավանականություն:

Զանի որ գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի համար և համարվում է տնտեսության ամենակարևոր ճյուղերից մեկը, այն արտադրում է սննդամթերք երկրի բնակչության համար և հումք՝ վերամշակող արդյունաբերության համար, ապահովում է ՀՆԱ-ի 21,9 %-ը և արդյունաբերության շատ ճյուղերի արտադրած արտադրանքի խոշոր սպառողներից մեկն է (մեքենաշինություն, քիմիական արդյունաբերություն և այլն), ապա էական ենք համարում վերականգնել գյուղատնտեսության նախարարությունը որպես առանձին գերատեսչություն, որը կկարողանա կատարել այս փոփոխությունները և չի ծախսի ահռելի գումարներ, քանի որ այս փոփոխությունները մեծամասամբ իրենցից ենթադրում են գյուղական տարածքների զարգացման ծրագրի կազմում, և ստեղծում են ուղղակիորեն հնարավորություն գյուղացուն ինքնազարգանալու հնարավորություն, առանց որևէ ռիսկեր կրելու:

FINANCIAL PROBLEMS OF REDUCING RISK OF AGRICULTURAL PLANTS IN ARMENIA

HRANT HAYRAPETYAN

*Armenian State University of Economics,
PhD student in the Department of Finances, Accounting,
Yerevan, Republic of Armenia*

Agriculture is one of the key sectors of Armenia's economy. The sector is of extreme importance in ensuring the country's food security. Furthermore, agriculture is particularly important for income generation and provision of living standards in rural areas, as well as for the development of the rural settlements.

The primary aim of the study is to identify the role and significance of agriculture, its current state, issues and the present problematic situation in the Republic of Armenia.

The objectives of the study are:

- to identify the causes of high risk in the sector,
- to estimate the impact and distribution of natural phenomena across the RA regions,
- to introduce possible solutions to the current issues.

During the study of the topic analytical, analysis, synthesis, dialectical, systematic and comparative methods were used.

Due to the geographical location of Armenia, the pronounced vertical zoning of the area, the mountainous terrain, the scarcity of soil and insufficient soil moisture, Armenia is classified as one of the most risky countries in terms of agriculture. Moreover, more than 70% of the land is characterized by desertification features and varying degrees of land degradation.

The priority task of the sector is to improve agriculture in the Republic of Armenia through implementation of a number of measures.

Keywords: *agriculture, current state, issues, development perspectives, soil, hazardous phenomena .*

ФИНАНСОВЫЕ ПРОБЛЕМЫ СНИЖЕНИЯ РИСКА ВЫРАЩИВАНИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ РАСТЕНИЙ В АРМЕНИИ

ГРАНТ АЙРАПЕТЯН

*Государственный экономический университет Армении,
аспирант кафедры финансов и бухгалтерского учета,
г.Ереван, Республика Армения*

Сельское хозяйство является одним из ключевых направлений экономики Армении. Данное направление играет важную роль в обеспечении продовольственной безопасности страны. Помимо вышесказанного, сельское хозяйство занимает важное место в вопросах обеспечения поступлений и определенного уровня жизни в населенных пунктах, их развития.

Целью данной работы является выявление основной роли сельского хозяйства, оценки текущего состояния, определение основных задач и проблемных ситуаций в РА.

Перед исследованием поставлены следующие задачи:

- выявление высокого уровня риска данной сферы,
- оценка уровня влияния стихийных явлений и их разделение по регионам РА,
- представление возможных решений для выявленных задач.

В процессе исследования были использованы методы диалектического анализа и синтеза, систематические, сравнительные методы.

В связи с географическим расположением, выраженным вертикальным уклоном и расколом горного рельефа, дефицитом и недостаточной влажностью земли, Армения относится к странам высокого риска с точки зрения сельского хозяйства. Также важно отметить, что более 70% земель в республике имеют пустынные признаки, с разными уровнями деградации.

Первостепенной задачей данной сферы считается осуществление мероприятий, направленных на совершенствование сельского хозяйства РА.

Ключевые слова: *сельское хозяйство, текущая ситуация, основные задачи, тенденции развития, земля, опасные явления.*